

ՇՎԷՑՑԱՐԱԿԱՆ ԳԻՒՂԸ *)

Ամառն անցաւ, իմ ընկեր, և ես հակառակ իմ ցանկութեան չկարողացայ քեզ մի հատ տող գրել. դժգոհ ես, գիտեմ, բայց եթէ իմանաս ինչ կեանք եմ վարել այդ ժամանակ, շատ էլ խիստ չես լինի դէպի ինձ:

Այս ամառ եղաւ մի խենթ ամառ, ահա թէ ինչ կարող եմ ասել: Թափառական և անհանգիստ կեանք անցրի շվեյցարական սիրուն լեռներում:

Գիտեմ ինչ. ձիւնազարդ Ալպերի կապուտակ լճերի այս հայրենիքում ամառային այդպիսի կեանքը դառնում է մի անյաղթելի պահանջ: Այստեղ դժուար է միևնույն տեղում շարաթներ ու ամիսներ նստել: Լեռների առաջին շարքը հորիզոնի վրայ քաշում է քեզ, քայլում ես, բացում է երկրորդ շարքը, նոյնքան զրաւիչ, նոյնքան խորհրդաւոր և այսպէս անվերջ: Քայլի՛ր, քայլի՛ր:

Այսպէս եղաւ իմ ամառը:

Այդ բոլորն անցաւ Գրում եմ քեզ այժմ: Եւ բանաստեղծական այդ պատկերներից յետոյ՝ իմ նիւթն այսօր խիստ պրոզայիկ է: Կեանքն է այդպէս, սիրելիս. նա վառ երազների և անողոք իրականութեան շաղախ է: Համակերպուենք:

Շվեյցարական համայնքի կազմակերպութեան մասին՝ իմ վերջին նամակից յետոյ դու սաստիկ ցանկանում էիր իմանալ թէ ի՞նչպէս է կատարւում հարկահանութիւնը, ո՞ւմ է յանձնուած այդ, ի՞նչ առաւելութիւններ կամ թերութիւններ ունի: Հասկանում եմ քեզ, դու ուզում ես և՛ այս մասում մեր երկրի գիւղական կարգերի հետ համեմատութիւններ անել: Ցաւում եմ սակայն, սիրելիս, որ ես չեմ կարող այդ նիւթի վրայ անհրաժեշտ վիճակազրական թուեր տալ քեզ հարցերը հիմնովին լուսաբանելու համար: Դու գիտես, որ տնտեսական խնդիրների հետ ես գլուխ չունիմ: Յիշում ես մեր աշակերտութիւնը,

*) Տես «Մուրճ», № 6.

թուերի առաջ եւ միշտ յօրանջում էի, իսկ երբ առիթ էր լինում խօսել բարոյական հարցերի մասին, իմ շատախօսութիւնը վերջ չունէր։ Այժմ էլ նոյնն է։ Բայց շատ էլ մի վհատուիք, այն, ինչ ես կը գրեմ, յոյս ունիմ՝ այնուամենայնիւ քեզ մօտաւոր դադարի կը տայ այս երկրի հարկային սխտեմի մասին։

Նախ ասեմ, որ անշարժ կալուածներն և հողային սեփականութեան իրաւունքն այստեղ անհատական է և բացարձակ։ Իւրաքանչիւր շվէյցարացի բացարձակօրէն տէր է իր արտի, իր այգու, իր տան, ինչպէս և իր շարժական կայքի։ Ի հարկին նա կարող է ծախել իր արտը կամ այգին ու և երբ կամենայ։ Սրա համար նա պատասխանատու չէ ոչ պետութեան և ոչ համայնքի առաջ։ Միակ ձևականութիւնը որ սեփականատէրը պարտական է կատարել վաճառքի ժամանակ, այն է, որ նա պէտք է ջնջել տայ համայնական մատեաններից իր անունը և նրա փոխարէն գրի նոր սեփականատիրոջ անունը որպէս տէր իր նախկին կալուածի։ Այս նպատակով հաստատուած գրասենեակներ կան, ուր յիշեալ ձևականութիւնը կատարելու համար առանձին դժուարութիւններ իհարկէ չլան։ Միայն թէ գնողը պարտաւոր է իր ձեռք բերած կալուածի արժողութեան 10% վճարել պետական գանձարանին որպէս նոր սեփականութեան հարկ։

Յայտնի է, որ զանազան երկրներում հողատիրական զանազան սխտեմներ կան մշակուած՝ իւրաքանչիւրի անցեալի մի շարք պայմաններով, տրադիցիաներով ու բարքերով անհրաժեշտ դարձած։ Որչափ տարբեր են բարոյական հասկացողութիւնները երկրէ-երկիր, յաճախ նոյնքան տարբեր են և սեփականութեան ձևերը. այսպէս յայտնի է, որ մեզանում գիւղացին հողի սեփականատէրը չէ, նա իրաւունք չունի վաճառել որպէս իր անշարժ կայքը, թէև թողնում է իր վաւակներին որպէս սեփականութիւն։ Տեղ-տեղ հողը բաժանուած է համայնքի անդամների մէջ հաւասար չափով (նափարի), ուրիշ տեղ գիւղացիներից ով որքան կարողացել է բռնել է և պահում է անխախտ։ Շվէյցարիայում ինչպէս տեսանք հողը բացարձակ սեփականութիւն է գիւղացուն։ Լիւ է հողատիրական այդ սխտեմը, թէ՛ վատ, եւ ասել չեմ կարող, որպէս ոչ կոմպետան այդ կարգի խնդիրներում։

Երկու սխտեմներից իւրաքանչիւրն ունի իր լաւ ու վատ կողմերը։ Մի դէպքում անհող բայց աշխատաւոր, բարեխիղճ գիւղացին հնարաւորութիւն չունի հող ձեռք բերել և բարձրանալ, մինչդեռ շատ ծոյլեր, հարբեցողներ պահում են լաւ հողաբաժիններ անմշակ ի վնաս երկրի հարստութեան։ Այսպէս է

մեզանում: Միև դէպքում որևէ ճարպիկ վաշխառու իր կապիտալով կարող է հողագործի դարձնել գիւղացիներին տնտեսապէս ստրկացնելով, զրկելով նրանց, եթէ հողի վաճառելու բացարձակ հնարաւորութիւն լինի: Այս երևոյթը յաճախ մենք տեսնում ենք մեզանում նոյնիսկ այժմ, երբ հողի վաճառումը օրէնքով թոյլատրուած է: Դու գիտես, թէ մեր գիւղում այդ ինչպէս է կատարւում: Վաշխառուն փող է տալիս նեղն ընկած գիւղացուն մեծ տոկոսով, և երբ վերջինս վճարել է կարողանում, տալիս է իր հոգեհանին իր արտը, որպէսզի նա օգտուի, մինչև իր փողը ստանայ: Եւ որովհետև պարտապան գիւղացին երբէք չի ազատւում պարտքից, արտն էլ երբէք յետ չի տրւում: Սակայն այսպիսի երևոյթ հազիւ թէ տեղի ունենայ Շվէյցարիայում, ուր գիւղացին լիովին հնարաւորութիւն ունի իր տնտեսական նեղ դրութիւնից դուրս գալու առանց դիմելու մասնաւոր քայքայիչ փոխառութեան: Այնտեղ կան բազմաթիւ փոխառու բանկեր, խնայողական արկղներ, այնպէս որ գիւղացին երբէք իր սեփականութիւնը մասնաւոր կասկածելի անձանց մօտ գրաւ դնելու ստիպողական հարկի մէջ չի գտնւում: Թողնենք դեռ այն, որ նա կանխապէս ապահովում է նաև ոչ միայն իր տունը և անասունները, այլ և տարեկան բերքերը: Դժբախտ պատահականութիւնների, բնութեան աղէտների առջն էլ այսպիսով առնուած է: Այսպիսով եթէ գիւղացին վաճառում է իր հողը, դա կատարում է մեծաւ մասամբ ոչ թէ յանկարծական աղէտների, թանգութեան շնորհիւ, այլ աւելի շուտ իր առանձին տնտեսական հաշիւներով—քաղաք անցնելու կամ այլ առևտրական ձեռնարկութիւն սկսելու նպատակով:

Բացի մասնաւոր սեփականութիւնից գիւղերում կան նաև համայնական և պետական հողեր: Ինչպէս որ մասնաւոր անհատներ ունին իրանց անտառներն ու արօտները, նոյնպէս պետութիւնը (կանտոն) և համայնքը ունին իրանց կալուածները: Պետականը շահագործւում է կալուածական դեպարտամենտի ձեռքով, իսկ համայնականը գտնւում է համայնական կառավարութեան բացարձակ իրաւասութեան տակ: Համայնքների հարստութիւնն ու աղքատութիւնը այսպիսով կախուած է ոչ միայն մասնաւոր անհատների սեփականութեան, այլ աւելի համայնական սեփականութեան քանակութիւնից: Ուրքան մեծ է մի համայնքին պատկանող (մասնաւոր սեփականութիւնից դուրս) արօտների և անտառների տարածութիւնը, նոյնքան հարուստ է համայնքը, և ընդհակառակը: Մի քանի համայնական կալուածներ մնացել են անցեալ դարու կէսին (1847) եղուիտներին և վանական այլ կաթոլիկ կարգե-

բին Շվեյցարիայից դուրս անելուց յետոյ, Համայնքները գրաւել են իրանց շրջանում եղած վանապատկան հողերը:

Շնորհիւ վերջին հանգամանքի հարկատուութեան տեսակէտից շվեյցարական գիւղերը կարելի է բաժանել երեք կարգի. 1. Համայնքներ, որոնց անդամները ոչ միայն իրանց մասնաւոր սեփականութիւնից ոչինչ չեն վճարում պետական գանձարանին, այլև ամեն տարի բաժանում են իրանց մէջ բերքերի և հում նիւթերի մի որոշ քանակութիւն: 2. Համայնքներ, ուր գիւղացին ոչ վճարում է և ոչ ստանում. և 3. Համայնքներ, ուր գիւղացին ստիպուած է իր մասնաւոր սեփականութիւնից տարեկան հարկ վճարել: Այս երևոյթը գուցէ մը փոքր անհասկանալի թուայ: Առաջին կարգի գիւղերը, որոնք շատ հաճախական կալուածներ ունին, խելացի տնտեսութեամբ իւրաքանչիւր տարի այդ կալուածներից ստանում են վառելիքի, խոտի, կարագի, պանրի այնպիսի քանակութիւն, որ վաճառելով՝ վճարում են համայնքի բոլոր հարկերը, իսկ մնացորդը բաժանում են գիւղացիների վրայ: Այսպիսով իւրաքանչիւր տարի գիւղացին ոչ միայն ոչինչ չի վճարում իր մասնաւոր գրպանից, այլև ստանում է ուտելիքի և վառելիքի մի աչքի ընկնող քանակութիւն: Երկրորդ կարգի գիւղերը նրանք են, որոնց համայնական կալուածները այնքան է, որքան հարկաւոր է տարեկան հարկերը լրացնելու համար: Այդ համայնքների գիւղացիները ոչ իրանց մասնաւոր արդիւնքից հարկ են վճարում և ոչ էլ բերքեր ստանում: Համայնական կառավարութիւնը հոգում է հարկերը ընդհանուր կալուածներից: Եւ երրորդ կարգի գիւղերը նրանք են, որոնք չունենալով համայնական հողաբաժիններ՝ ստիպուած են իրանց մասնաւոր արդիւնքներից լրացնել պետական հարկը: Սրանք են ամենաաղքատ գիւղերը: Ինչ ասել կ'ուզի, որ առաջին կարգի համայնքները խիստ սակաւաթիւ են: Եւ նրանք աշխատում են ամեն հնարներով իրանց մէջ նոր անդամներ չընդունել, որպէսզի ընդհանուր հարստութիւնը նոր բերանների հետ բաժանելու հարկ չլինի:

Չափազանց դժուար, եթէ ոչ անկարելի է այդպիսի համայնքների բնակիչ գրուել: Պետութիւնը միջամտելու իրաւունք չունի, դա հակառակ կը լինէր տեղական ինքնավարութեան, իսկ համայնական ժողովն էլ միշտ մերժում է նոր անդամներ ընդունել:

Պետութիւնը ինչպէս իրաւունք չունի որեւէ համայնքում նոր բնակիչներ, գաղթականներ տեղաւորել, նոյնպէս նա չի կարող հողաշատ համայնքի սահմաններից կտել և յանձնել հարեան սակաւահող համայնքին: Այս դէպքում էլ սեփականու-

Թեան իրաւունքը բացարձակ է, ինչպէս և անհատների վերաբերմամբ: Պարտքերի և իրաւունքների սահմանները պետութեան և համայնքների մէջ, ինչպէս և փոխադարձաբար անհատների մէջ այնպէս խստութեամբ սահմանուած են, որ ոչ մէկը միւսին չի խանգարում, և գերագոյն դիտումներ չեն կարող այս յարաբերութեանց հիմնաւոր սկզբունքները խախտել: Դառնանք հարկերին:

Շվէյցարիան, ես քեզ գրել եմ ուրիշ անգամ, աղքատ է և նեղ իր բնակիչների համար: Միայն ծայրայեղ տնտեսութիւնը թէ պետութեան, թէ համայնքների և թէ անհատների, և մանաւանդ բնակիչների տոկուն աշխատասիրութիւնը, գիտական տեխնիկան հողի մշակութեան մէջ և խելացի արդիւնագործութիւնը հնարաւոր են դարձնում համեմատական բարեկեցիկ վիճակ: Այս պայմաններում զարմանալի չէ, որ անմիջական գլխաւոր հարկերից դուրս կան բազմաթիւ մանրմունք ուղղակի կամ անուղղակի հարկեր: Քեզ արդէն գրել եմ, որ այս երկրում շները վրայ հարկ կայ, և այն բաւական խոշոր հարկ— եթէ չեմ սխալուում՝ 20 Փր. (մօտ 7 ռ.) իւրաքանչիւրին: Այժմ կ'աւելացնեմ, որ նախանցեալ տարւածանից հարկի ենթարկուեց և հեծանիւը, խօսք կար նաև դաշնամուրների մասին: Ես չեմ կարող յիշել բոլորը, բայց կան բազմաթիւ այլ մանրմունք հարկեր, որոնք մեր երկրում գոյութիւն չունին: Մի բան սակայն երեք չի մոռացուում նոր հարկ սահմանելիս: Կառավարութիւնը թէ համայնքը աշխատում են հարկի ենթարկել բացառապէս այնպիսի առարկաները, որոնք ժողովրդի անմիջական և կենսական պէտքերին չեն ծառայում, այլ աւելի շուտ ճոխութեան, զուարճութեան առարկաներ են, ինչպէս շները, հեծանիւները և դաշնամուրները: Այս հիմնական սկզբունքը պահելով՝ խուսափում են բազմաթիւ անարդարութիւններից: Երկրորդ խոշոր սկզբունքն է հարկատուութեան մէջ համեմատական չափը ունեւորների և չունեւորների մէջ: Եթէ օրինակ հազար ըուբլի ունեցողը վճարում է 2 ըուբլի, երկուհազար ունեցողը կը վճարի ոչ թէ 4, այլ օրինակ 5 ըուբլի, 3 հազար ունեցողը փոխանակ 6-ի կը վճարէ 8 կայլն:

Սա հարկատուութեան այն սխտեմն է, որ կոչւում է պրոգրեսսիւ (impôt progressif): Այսպիսով աղքատ ու հարուստ ոչ թէ վճարում են կարողութիւնների յարաբերութեան համեմատ, այլ հարուստը վճարում է շատ աւելի, և երկրի հարկերի խոշոր բաժինը ընկնում է նրա վզին: Ըստ երևոյթին այս սխտեմը թւում է անարդար, որովհետեւ համեմատական չափը խախտւում է ի վնաս հարուստների, բայց երբ մարդ խորը

քննում է, տեսնում է, որ աւելի արդար սխտեմ դժուար է մտածել: Որչափ մեծ է մի մարդու կարողութիւնը, այնքան փոքրանում են նրա համար միութիւնները, և այնքան հեշտ է դառնում խոշոր գումար վճարելը. տարեկան տասնեակ հազարներ արդիւնք ունեցող մարդու համար ըուբլին նոյնքան մեծ չի, որքան միքանի հարիւր ունեցողի համար, և ոչինչ անարդարութիւն չկայ, եթէ առաջինը շատ աւելի վճարի, քան երկրորդը: Եւ միւս կողմից եթէ ինկատի ունենանք, որ հարկը վճարուում է փոխանակ այն առաւելութիւնների, որ իւրաքանչիւր քաղաքացի վայելում է այս կամ այն պետութեան մէջ, այն յարմարութիւնների համար, որ հասարակութիւնը իր քաղաքական կազմակերպութեամբ տալիս է անհատին՝ ապահովելով նրա գոյութիւնը, նրա վաստակը, գոյքը, եթէ ինկատի ունենանք այս բոլորը, հասկանալի և արդար կը լինի աշխատաւորի այս փոքրիկ արտօնութիւնը: Նա իբրեւ նիւթական կարողութիւն, աւելի քիչ է պարտական հասարակութեանը, քան հարուստը. մի գործարան, կամ մի խոշոր կալուած աւելի մեծ հոգս պիտի պատճառի պետութեանը, աւելի զարանտիաների պէտք ունի բարգաւաճելու համար, քան բանուորի բան ու քլունդը:

Շվէյցարիան, դու գիտես, սիրելիս, ռամկավարական երկիր է, ուր կառավարութիւնը բաժանւում է երեք խոշոր միութիւնների վրայ, և դրանք են դաշնակցական կենտրոնական իշխանութիւնը, կանտոնը և համայնքը: Սրանցից իւրաքանչիւրը իր ինքնավարութեան սկզբունքով խոշոր չափով անկախ է իր գործունէութեան մէջ: Ահա թէ ինչու այդ երեք կազմակերպութիւններից իւրաքանչիւրն էլ իր առանձին հարկերն ունի իր ներքին տնտեսութիւնը վարելու համար: Այսպիսով Շվէյցարիայում կան դաշնակցական, կանտոնային և համայնական տուրքեր: Առաջինին պատկանում են մաքսերը և ոգելից ըմպելիների, ծխախոտի, պոստային նամականիշների, ինչպէս և զինուորական ծառայութիւնից յարգելի պատճառով ազատ մնալու համար որոշուած տուրքերը:

Կանտոնները իրանց հերթին իրաւունք ունին ամենատեսակ հարկեր սահմանել ըստ իրանց սահմանած հարկադրութեան սխտեմի. նրանց արգելուած է միայն մաքս առնել իրանց սահմանների վրայ, որովհետեւ այլապէս երկրի ներքին առևտուրը և առհասարակ տնտեսական կեանքը կը տուժէր և միութիւնը կը խախտուէր:

Եւ վերջապէս համայնքները կարող են հարկեր սահմանել

իրանց պէտքերի համար՝ համակերպուելով կանտոնային կայ-
աւարութեան դիտուններին հետ:

Շվէյցարիայում բացի բազմաթիւ մանր տուրքերից, կան
երեք գլխաւոր հարկ. 1) հողային տուրք (impôt foncier), որ
վերաբերում է մարգագետիններին, արտերին, այգիներին. 2)
շարժական կայքերի տուրք (impôt mobilier), որ վերաբերում է
կապիտալին, տոկոսաբեր թղթերին և սրանց նման կարողու-
թեան. և 3) աշխատանքի արդիւնքի տուրք (impôt sur le
produit du travail), որի համաձայն իւրաքանչիւր աշխատաւոր
իր տարեկան վաստակի մի որոշ տոկոսը վճարում է գանձա-
րանին:

Այս հարկերից առաջին երկուսը, այսինքն անշարժ և
շարժական կայքերի տուրքերը պրոգրեսիւ են: Փոքր կարո-
ղութիւնների տէրերը համեմատաբար աւելի քիչ են վճարում,
քան մեծահարուստները: Այսպէս 2500 ֆր. ունեցողը վճարում
է ամենմի հազարին 1 ֆր., ուրեմն 25 ֆր., բայց 5000 ունե-
ցողը վճարում է առաջին 2500-ի համար դարձեալ 25 ֆր. իսկ
երկրորդ 2500-ի համար վճարում է հազարին 1 ֆր. 25 սան-
տիմ, ուրեմն և այսպէս յաջորդաբար: Ահա այսպիսով խոշոր
դրամագլուխ կամ ընդարձակ և հարուստ կալուածներ ունեցող
մարդը ստիպուած է ամենայն տարի ահադին գումարներ վը-
ճարել պետական, գանձարանին:

Եթէ հարուստը, դրամատէրը վճարում է իր կարողու-
թիւնից, աշխատաւորն էլ վճարում է իր քրտինքի արդիւնքը:
Եւ ինչպէս որ պէտք էր սպասել, շվէյցարական օրէնքը աշ-
խատաւորի քրտինքի ամենմի կաթիլը թիստ թանկ է գնա-
հատել: Աշխատաւորի մի ֆրանկը հաւասար է համարել հա-
րուստ դրամատիրոջ հարիւրներին և հազարներին: Ահա թէ
ինչու երկրորդ տեսակի տուրքը՝ աշխատանքի արդիւնքի վրայ,
որ սովորաբար վերաբերում է բանուոր դասակարգին, դրուած
է հարկատուների համար մի շարք նպաստաւոր պայմանների
մէջ: Այսպէս ամենմի աշխատաւոր նախ իրաւունք ունի իր
վաստակի տարեկան քանակը նուազեցնել 600 ֆրանկով, յե-
տոյ նա իր իւրաքանչիւր անչափահաս երեխայի համար պէտք
է վերցնի դարձեալ երեքհարիւրական ֆրանկ, ապա թէ մնացա-
ծի մի որոշ տոկոսը վճարի իբրեւ տուրք: Եթէ ընդունենք, որ
բանուորն ունի երկու անչափահաս երեխայ և վաստակում է
տարեկան միջին թուով 1200 ֆրանկ, ապա նա ոչինչ չի վճա-
րի միայն 600 ֆրանկի համար:

Շվէյցարիայում, ինչպէս և մեր երկրում, իւրաքանչիւր
համայնք իր ներքին ծախքերի համար իրաւունք ունի, ինչպէս

ասացի, պետականից դուրս տուրքեր սահմանել, եթէ այդ անհրաժեշտ է համարում: Միայն թէ նա պարտաւոր է նախապէս պետական խորհրդի համաձայնութիւնն ստանալ, պատճառաբանելով նոր տուրքի անհրաժեշտութիւնը: Եւ ամենմի նոր հարկ կարող է տեւել միայն հինգ տարի, որից յետոյ նա կամ պէտք է դադարի, կամ նոր թոյլտուութիւն ստացուի:

Համայնական հարկերն ևս կանտոնայինի նման երեք գըլխաւոր աղբիւր ունին, անշարժ, շարժական կայքեր և երրորդ՝ աշխատանքի արդիւնքը: Ոոչոր տեղ է բռնում այդ բոլորի մէջ կտակներից և առհասարակ կալուածների վաճառումից ստացած տուրքը, այն, ինչ կոչւում է droit de mutation կամ՝ եթէ կարելի է այսպէս ասել, փոխանցելու իրաւունք: Բացի այս՝ իւրաքանչիւր անհատ, որ ապրում է որևէ համայնքում, լինի բնակիչ, թէ եկուոր, պարտական է գլխահարկ վճարել: Այս հարկից ազատ են միայն ամուսնացած կանայք և աղքատները:

Ասացի, որ Շվեյցարիան աղքատ երկիր է, և ժողովուրդն ստիպուած է բաւական խոշոր հարկ վճարել ուղղակի և անուղղակի, որպէսզի կարողանայ իրելի կաւաւորական անհրաժեշտ պէտքերը հոգալ: Մի մօտաւոր գաղափար տալու համար ես առաջ կը բերեմ մի փոքրիկ վիճակագրութիւն այդ մասին: Այսպէս վերջին ժամանակները դաշնակցական հարկը հասել է 58 միլլիօն երկու հարիւր հազար Ֆրանկի, կանտոններինը՝ 50 միլլիօն չորս հարիւր հազարի, համայնքներինը 40 միլլիօն 250 հազարի, գումարն է 148 միլլիօն 850 հազար, ասել է իւրաքանչիւր շվեյցարացի միջին թուով վճարում է տարեկան 50 Ֆրանկից ասելի (մօտ 20 բուրլի): Մաքաւական խոշոր գումար է: Եւ ժողովուրդը վճարում է անտրտունջ, նախ՝ որովհետեւ ինքն է սահմանել տուրքերը գիտակցաբար, և երկրորդ՝ հարկատուութեան սխտեմը խելացի կերպով յարմարեցրած է տեղական պահանջներին, ի նկատի են առնուած մի շարք հանգամանքներ, որոնք հեշտացնում են հարկահանութեան գործը:

Հարկահանութիւնը կատարւում է ամենախաղաղ կերպով: Իւրաքանչիւր համայնք ազատ է կատարել այդ գործը ըստ իր հայեցողութեան: Նա ընտրում է իր հարկահանը, ինչպէս մեզանում, և կարող է նրանից որոշ գրաւականներ պահանջել, որովհետեւ պետութիւնը պատասխանատու չէ, եթէ զեղծութիւն տեղի ունենան: Հարկաժողովի օրերը սոսկումի, ծեծի և հայհոյանքի օրեր չեն գիւղերի համար: Իւրաքանչիւր գիւղացի որոշ ժամանակին առանց տրտունջի և վիրաւորանքի տանում, վճարում է իր պարտքը: Իւրաքանչիւրը գիտէ, որ իր ամենմի սանտիմը նախատեսնուած է երկրի ծախքերի մէջ և առանց դը-

բան հասարակական-քաղաքական կազմը չի կարող ընթանալ։ Անհատների այս գեղեցիկ գիտակցութիւնը դառնում է ընդհանուրին մղումն տուող մի բարոյական ոյժ, որ արտայայտուում է այնպիսի հասարակական ըստ երևոյթին անախորժ գործառնութեան մէջ, որպիսին է հարկերի սահմանումը, բաշխումը և հաւաքումը։ Զեղծումների հեռաւոր կասկած անգամ չկայ, իսկ եթէ տեղի ունենայ մի այդպիսի բացառիկ, ցաւալի երևոյթ — մարդը միշտ մարդ է ամեն տեղ — արդարադատութիւնը մօտ է և արագ։

Գրում եմ այս տողերը, և միտս են դալիս իմ մանկութեան օրերը. ես տեսել եմ մեր գիւղում հարկահանութիւնը կամ ինչպէս մեղանում ասում են՝ «խարջ ժողովելու օրերը»։ Նախ՝ այն մութ ու անիրաւ գործը, որի անունն է «թովջի» — հարկերի բաշխումը։ Նստում են գիւղամիջում այսպէս կոչուած գիւղի իշխանները, բանիմացները, ոչսի հետ և կազմում են համայնական ծախքերի հաշիւը։ Մի խումբ գայլեր երբէք աւելի վատ չեն կարգադրի դաշտում անտէր ձգուած ոչխարի հօտի ճակատագիրը։ Այստեղ մտնում են և՛ պատուաւոր հիւրերը ընդունելու ծախք և՛ ընծաներ ջրբաժանին, ճաշ տանուտէրին, և՛ Արաքսից ջուր կապելու ծախք, և՛ հարկահանի ուճիկ, և՛ կամուրջներ, որոնք գոյութիւն չունին, ճանապարհներ, որոնք անանցանելի են, առուներ, որոնք չեն փորուած կայն կայն։ Եւ այս բոլորը, որ միջանի հացկատակ պարագիտների գրպան է մտել, համայնական հարկի անուան տակ աւելանում են պետական հարկերի վրայ, և յետոյ սկսւում է հարկաժողովը։

Վաղ առաւօտից ուշը դալար ճիպոտը ձեռքին հարկաժողովի հետ բազմում է գիւղամիջումն և ուղարկում է գզրին կանչելու գիւղացիներին։ Չեն գալիս, հեշտ է... «խարջ են ուզում ախր»։ Գրիգորը՝ հանդ, Թորոսը դաշտ է գնացել, Սարգիսը՝ հարեան գիւղը կայն։ Իրօք բոլորն էլ փախչում են այսուայն կողմ, պէտք է ժամանակ վաստակել, պէտք է այսուայն կողմ ընկնել, խնդրել, մուրալ, ճարել այս սարսափելի հարկը, որովհետեւ ճիպոտ կայ, հայհոյանք կայ, ծեծ ու բանտ կայ։ Բայց ուշը նստել է, նրան «խարջ» է հարկաւոր, պահանջում են, յետոյ ինքն էլ, իր ընկերակից իշխաններն էլ շահագրգռուած են, որ շուտ հաւաքուի, արած ծախսերը շուտ ծածկուեն, ծայրերն անհետանան, մութ գործերը թաղուեն։ Անցնում է մէկ, երկու օր, շատ քչերն են բերում, գիւղն աղքատ է, գարուն է, աշխատանք չկայ, տանը շատ անգամ հաց չկայ, վաճառելու ապրանք չկայ, կահկարասիները մեծ մասը նախընթաց «խարջերի» համար ծախուած են, մնացել են մի տուն լիքը հաց ու

տողներ, մի խումբ երեխաներ, որոնց եթէ թոնիր ածես, մշահոտ չի գայ, այնպէս մերկ են:

Եւ ոչսը խարջ է պահանջում:

Սակւում է վրդովեցուցիչ, վայրենի տեսարանների, յուզիչ պատկերների մի ամբողջ շարք: Ռէսը ծեծում է, գզիրը ծեծում է, չափարը ծեծում է, քրտնած թիկունքների վրայ վերից վար իջնում է դալար ճիպոտը, յետոյ հայհոյանքներ... բոլոր գերեզանները բացւում են, մեռելները դուրս են գալիս կենդանիների հետ անարգուելու համար: Պարջը պէտք է վճարել, ինչ ուզում է լինի: «Միքանի օր, տանուտէր, միայն երկու օր ժամանակ».— «Հէրդ, մէրդ ծախի, խարջը բեր», լինում է պատասխանը: Եւ ծախում է, ինչ ճարւում է, անցած աշխատանքի արդիւնքը կէս գնով, ապագայ վաստակը, բերքը քառորդ գնով: հրապարակ են գալիս վաշխառուները, բամբակի, խաղողի, ցորենի փող բաժանողները: Կողոպուտն ընդհանուր է դառնում: Վաճառում, անարգում, կողոպուտում է ամենինչ: Պարջի օրերը գիւղում, սգի օրեր:

Յիշում ես, ընկեր, այն տարին մեր ոչսը թուրք էր և անունը Մադըդ, նա դեռ կենդանի է: Մենք երեխաներով խաղում էինք փողոցում, երբ նա իր գզրի հետ յայտնուեց և հրամայեց կանչել հարեան Սարգսին: Եւ դուրս եկաւ նա, այն ողորմելի Սարգիսը. նա հագած ունէր մի երկար, գզգզուած մուշտակ, որի բազմաթիւ բացուածքներից բրդերը կախկիւսուել էին՝ տալով նրան մի բրդաթող զազանի տեսք. տխուր ու այլաճանաչ պատկերը լրացնելու համար նա գլխին ձգել էր մի կեղտոտ, նոյնպէս պատռտուած լիւր աչքերին հովանի անելու համար, որոնք ցաւում էին: Նա քայլում էր դանդաղութեամբ, այդ խեղճ ու կրակ արարածը մի ձեռքով փայտի վրայ, միւսով փոքրահասակ որդու ուսին յենուած: Նկաւ ու կանգնեց ոչսի առաջ, գլուխը կախ, մէջքը կռացած որպէս մի ստրուկ, մի դատապարտուած: Մենք նայում էինք. սկսուեց մի հարց ու պատասխան, որ մենք այնքան անգամ լսել էինք. «Խնչի՞ւ հարկը չես տալիս շուն շան...»

— Կը տամ տանուտէր, կը տամ, թող որ աչքերս բացուեն մի քիչ, տնից դուրս գալ չեմ կարողանում, աչքերս չեն տեսնում, ձեռքիս էլ չկայ, աղերսում էր Սարգիսը: Նրա միայն ձայնն էր լսում այն այլաճանաչ լիւրի տակից, չէր երևում ոչ գլուխը, ոչ դէմքը: Ռէսը լսում էր և սպառնալի կերպով ճօճում ձեռքի փայտը: «Ես բեղ տսում եմ խարջը տուր էս սհաթիս, քո...» և ճիպոտը շարժեց, ու հարուածները տեղացին

Սարգսի գլխին, լնեբի... տակ սկսուեց վայ-վայը, անէծքը, աղերսը, հեծեծանքը: Մենք փախանք զանազան կողմեր:

Օ, գիւղը խարշի օրերում, դժոխք... Այս և նման պատկերներ գալիս, անցնում են աչքիս առաջից որպէս հիւանդ վիրաւոր ուղտերի մի կարաւան, որ գնում է, գնում և դադար չունի, որի տեսքը նողալի է և յոգնեցնում է: Յիշում եմ այդ բոլորը և մտածում ցաւով, թէ ինչո՞ւ յատկապէս արեւելքի պայծառ երկնքի տակ այդքան ցաւ ու արցունք: Մեր հողը արգասաբեր է, ջրերը առատ, բնութիւնը հարուստ կուրծք ունի, որ միայն թեթեւ աշխատանք է պահանջում, ինչո՞ւ այնուամենայնիւ մեր ժողովուրդն այնպէս աղքատ է, կարօտ, անձաւոր: Այս աղքատ Շվէյցարիան, որի մակերևոյթը ծածկուած է կամ լեռներով ու ժայռերով, կամ լճերով ու անտառներով, կարողանում է իր զաւակների պէտքերը լրացնել իր այնքան սուղ բերքերով: Ինչո՞ւ մեզանում տառապում են, խեղճ են ու քաղցած, անիծում են ու լալիս անձարութեամբ, իսկ այս աղքատ Շվէյցարիայում մարդիկ գոհ են ու երջանիկ:

Հարցեր, հարցեր, ծանր ու տանջող, որոնց ծանրութեան տակ մարդու ուղեղն է տնջում: Գիտե՞ս, սիրելիս, ես կ'ուզէի, որ այդ հարցերով մեզանում շատ գլուխներ զբաղուեն, թող նրանք որպէս ճիւղայններ տակնուվրայ անեն հողիները, ապուշ, անզգայ խաղաղութիւնը թունաւորեն: Զարհուրելի է դժբախտութիւնը, երբ նա չի զգացւում, երբ նա տարւում է, որպէս բնական անխուսափելի երևոյթ:

Այդպէս աշխարհում հօ մահն է միայն, բայց մեր ժողովուրդը իր բոլոր թշուառութիւնները, իր սև օրերը, իր անտէրութիւնը համարում է մահուան պէս բնական, նրա պէս անհրաժեշտ, անողոր: Պէտք է քանդել այս մութ հասկացողութեան բոլորոնած, մզլած և զարշահոտ շէնքը, փոյթ չէ, եթէ դրանով մենք աւելի դժբախտ, աւելի անհանգիստ դարձնենք այդ շէնքում ապրողներին: Անորոշը, նոյնիսկ անկարելին երազելը ինչքան և ցաւ պատճառի մեր հոգուն, գերադասելի է բութ անասնական խաղաղութիւնից: Ես ուզում էի, որ մեր ժողովուրդը գիտենայ, թէ ուրիշ կացութիւն, ուրիշ ճակատագիր հնարաւոր է, որ կան հորիզոններ, ուր մարդը այնքան չի հեծում ու տնջւում: Թող նա երազի. տենչայ, թող միայն նրա հոգին հեռաւոր գեղեցկութեան կարօտով, և մի օր այդ երազները աշխատանքի շնորհիւ կեանք ու բովանդակութիւն կը ստանան: Իդէալը. գոնէ իդէալը մարդկային տքնութիւնների յաւիտեանական շարքի մէջ:

Շվէյցարիան էլ դրախտ չէ, ուր եղ ու մեղր է հոսում, նոյեմբեր, 1904.

ուր մարդու ճակատը երբէք չի կնճուում: Ընդհանուր պատկերի վրայ կան բազմաթիւ սև բծեր, մուսլ երևոյթներ, այստեղ էլ կեանքը ունի շատ տխուր, շատ ցաւոտ կողմեր: Կատարեալ և անխառն երջանկութիւնը չի տուած մարդուն, նրա ոտքին ճակատադրապէս կապուած է ցաւն ու սեղ, ուր և գնալու լինի: Խնդիրը միայն համեմատական չափի մէջ է և մանաւանդ կեանքի դժուարութիւնների, ձտխորդութիւնների, դժբախտ պատահարների դէմ մաքառելու և նրանց յաղթելու մէջ: Քաղաքակրթութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ այդ անդուլ պայքարի պատկերը և նրա արդիւնքը: Շվէյցարիայում քիչ է մնում անկարելին կարելի դառնայ, մեղանում դրա հակառակ նոյնիսկ կարելին անկարելի է: Ահա այս պէտք է փոխել:

Էհ, թողնենք, սիրելիս, այս հարցերն առանց այն էլ քեզ երևի շատ են տանջել իմ այս նամակագրութեան ընթացքում: Այսօր ես էլի մի փոքր շատախօսեցի, որովհետև սա իմ վերջին նամակն է Շվէյցարիայից: Նիւթը չէ անշուշտ, որ ինձ պակասում է. այս երկիրը դեռ չափազանց շատ խրատական կողմեր ունի մեզ համար: Կարելի է գրել անվերջ, ես միայն գիւղից խօսեցի և այն ոչ կատարեալ կերպով. բայց այնքան բան կայ դեռ ուսանելու, ուսումնասիրելու, գրելու, պատմելու:

Ափսոս որ չեմ կարող. դադարեցնում եմ նամակներս, որովհետև շուտով պէտք է վերադառնամ հայրենիք, որին այնքան յիշեցի այս թղթակցութիւններին մէջ և որին սաստիկ կարօտել եմ: Նա խեղճ է, տգէտ ու խաւար, դարերի մահախուղը դեռ ծանրանում է նրա վրայ, մարդիկ քայլում են մըտական մշուշի մէջ, խարխափելով, կոյր ու դժբախտ, բայց նա հարուստ է քնած ուժերով, նրա կուրծքը լի է էներգիայով, ստեղծագործող թափով:

Ես հաւատում եմ նրա ապագային, նրա փայլուն ապագային: Աշխատող ձեռները, մտածող գլուխները, զգացող ջերմ սրտերը այնտեղ հրաշքներ կարող են գործել:

Հաւատանք, սիրելիս, հաւատանք և աշխատենք:

Յոսեփ Թիւն!

Ընկերդ՝

ԿՈՒՐԲԱԹ-ՀԱՐՈՒՆ